5 (102). ՀՈԳԵԱՌ ՃԵՏ

Կէղնին ու չէղնին մեր ու տղեմի կէղնին։

Էղ մերն է, տղեն կը հիվընդնա, հ'ըմենօր կէրթա գիգա, կըսե.— Լա՛ո, դու մի՛ հիվընդնա, ես կը հիվընդնամ, քու խատեն Կառնեմ, քու բալեն առնիմ ու քու տեխ ես կը մեռնիմ, ինչ չոռ ու ցավ կա, քու մամու վրեն թըղ հ'իգա, քու մամու ջանին էղնի։

Տղի աչից կելնա ուր հոխբաղութենի հ'ապով մոր ըսածներուց, կըսե՝ «Կայնի ես իմ մեր պիտի ջրպիմ տեսնամ օղորդ է օր էդի կըսե՝ քու տեխ ե՛ս հիվընդընամ, քու տեխ ե՛ս մեռնիմ»։

Կելնի էբերե ճետ մի կլպոկե, կմտու թունդրա ակ ու կէրթա պարկի։ Մեր էլման գիգա, կը մեռնի հարի հոխբաղութեն կէնե։

— Լաո՛, քու տեխ ե՛ս մեռնիմ, քու տեխ ե՛ս հիվընդընամ, աստված քու ցավ թափե իմ վրեն, քու խատեն առնիմ, քու բալեն առնիմ։— Ինչ օր պետկն է կըսե, օր տղի սիրտն առնե։

Տղի չարեն կը կտրի, էլ չը կոնա տանի, կատատորե, ական ջուլ կը քաշե։ Օր կը քաշե, լպոկուկ ճետ կելնի վաղե-վաղ գիգա դեմի տղեն ու մամ։

Մերն օր լպոկ ճետ կը տեսնի, խուտում կը կոտրի, կէնե օր հ'ելնի փախնի, տղեն չթողե։

Կըսե.— Էդ ի՞նչ է։

Տղեն կըսե.— Իմ հոգեառն է, էկեր է իմ հոգին կառնե, շիշկը-ռավ էկավ քու դեն։

Մերն կը բոռա, կըսե.— Ցամա՛ն, ես չի՛մ հիվանդ, ես չի՛մ հիվանդ, հիվանդ ինա է, գնա ընտոր դեն,— ու ձեռ կհ'երկնցու տղի գին։

Տղեն կը վերցու, կըսե.— Մերիկ, քու հերն անիծուկ էղնի, իդա հըմլա՞ է քու ճիկար, գիշեր, ցերեկ կըսեր՝ «Քու խատեն առնիմ, քու բալեն առնիմ, քու տեխ մեռնիմ». ճետ էկավ քու դին, վախեցար, ըսիր՝ «Հիվանդ եռ չեմ,— ըսիր,— ինա՞ է, գնա ընտոր դին, ընտոր հոգին առ»։

Կելնի փետ մ՝էրկու կը զարկե մամուն, կէնի դուրս, գիդա պարկի կը սախնա, կելնա։